


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Բարի Սամարացին



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot; Lazarus

Adapted by: Ruth Klassen: Sarah S.

Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



"Ուսուցիչ, ի՞նչ պետք է ընեմ,
որ յաւիտենական կեանք
ունենամ": Այս հարցում
հարցնող մարդը
փաստաբան էր,
կը փորձեր
Յիսուսին
խաբել:

"Ի՞նչ կ'ըսէ Աստուծոյ
օրէնքը", Յիսուս պատասխանեց:



"Սիրէ Աստուած ու քու
դրացիդ", ըսաւ մարդը:
"Բայց ո՞վ է իմ դրացիս":



Պատասխանելու համար մարդուն հարցումին,
Յիսուս պատմութիւն մը պատմեց մարդու
մը, որ կը ճամբորդէր
Երուսաղէմէն
Երիքով: Մարդը
յարձակումի
ենթարկուեցաւ

գողերու
կողմէ:



Գողերը ամեն ինչ որ գտան
գողցան, նոյնիսկ դժբախտ
ճամբորդին հագուստները:



Անոնք նաեւ զայն ծանր
վիրաւորեցին, կէս մահացած
թողնելով ճամբուն եզերքը:



Բարեբախտաբար քահանայ մը
կ'անցներ այնտեղէն: Անշուշտ
որ պիտի օգներ վիրաւոր
մարդուն:



Ո՛չ: Երբ տեսաւ մարդուն
արիւնլուայ վիճակի մէջ,
ճամբուն հակառակ
կողմէն գնաց:



Քիչ ետք ոտքի ձայներ լսուեցան ուրիշ անցորդէ
մը: Ան դեւտացի է, այսինքն՝ մէկը, որ
քահանաներուն կ'օգնէր
տաճարին մէջ:



Գնաց եւ նայեցաւ վիրաւոր մարդուն,
յետոյ առանց օգնելու գնաց:



Վերջապես Սամարացի մարդ մը եկաւ:
Հրեաները կ'ատէին Սամարացիները:



Ժողովուրդը կը լսեր Յիսուսի պատմութիւնը
եւ չէր ընդունէր, որ Սամարացին ըլլար
պատմութեան հերոսը: Բայց այդպէս
էր: Սամարացին հոգաց եւ կանգ


առաւ օգնելու համար:



Սամարացին ծունկի
եկաւ եւ նրբօրէն դեղեց
եւ փաթեց օտարին
վերքերը: Ետքը օգնեց
վիրաւոր մարդուն, որ
իր էշը հեծնէ:




Ճամբու վրայի պանդոկի մէջ
Սամարացին շատ լաւ հոգ տարաւ
մարդուն
ամբողջ
երեկոյ:



Առաւօտուն ան պանդոկի տիրոջ
վճարեց, որպէսզի լաւ հոգ տանին
ճամբորդին մինչեւ
լաւանայ:



Պատմութիւնը վերջացաւ: Յիսուս
հարցուց. "Ո՞վ էր դրացին, որ
վիրաւորեց մարդուն":





Փաստաբանը
պատասխանեց.
"Իր դրացին
Սամարացին
էր, որ գթութիւն
ցուցաբերեց":



"Գնայ եւ դուն ալ նոյնը
ըրէ", ըսաւ Յիսուս:
Դրացի մը ամէն ոք
է որ պետք ունեցած
ատենդ կը հասնի
օգնութեան:



Կրնանք սեր ցոյց տալ
օգնելով մարդոց, որ
պետք ունին: Այդ է,
որ կը գոհացնէ
Աստուծոյ:



Բարի Սամարացին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 10

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

